

և ևոգեհանգիստին : Իրենց նախուհի
տարազներով՝ աչքի կը զարնէին
մանաւանդ մակեդոնացիները , որոնց
հոգեւոր հովիւը , զազափարական
քահանայ մը , դուռը կեցած՝ Չերմե-
ռանդօրէն կունկնդրէր հայկական
ժամերգութեանց :

Բազմատարր ժամաւորները , ա-
րարողութեանց աւարտումէն ետքը ,
մտան արական վարժարանին պար-
պարտէզը : Հոս , տեսարանը հիւանա-
լի էր : Վարժարանին ճակատի երեք
սիւնները պնդազարդուած էին զալար
ոստերով և երկններանք ծաղիկնե-
րով , մէջտեղի սիւնին վերեւ , զե-
տեղուած էր Հ. Յ. Դաշնակցութեան
նշանակը , — ջրուտ ձեռքի մը մէջ՝
կարմիր դրօշակ մը , որուն վերեւ
գրուած է «Հ. Յ. Դաշնակցութիւն
1890—1900» մէկ գին փնտուրէ գրիչ
մը , միւս կողմը , դաշոյն մը և բահ
մը : Անցողակի բռնեք թէ այս գեղե-
ցիկ նկարը՝ դործն է սաղանդաւոր
պատանիի մը Պ. Վ. Սուրբկեանի :
Այլ սիւնը կը կրէր Պետոյին մեծա-
գիր կենդանագիրը , չքեղ պսակի
մը մէջ , իսկ ձախ սիւնի վրայ զըր-
ուած էր Բարկէն Սիւնիին պատկերը՝
նմանապէս մեծագիր ու պերճ :

Հանդէսը սկսաւ «Բամբ որոտանողով
զոր մեծ խանգով մը երգեցին արա-
կան վարժարանին սաները իրենց
երաժիշտ-դասատուին . Տեար Ծէր-
մանեանի առաջնորդութեամբ : Ան-
միջպէս ետքը՝ բեմ ելաւ Պ. Ա. Շալ-
ճեան՝ որ պարզեց հանդէսի նշանա-
կութիւնը յստակ և իմաստայից
բանախօսութեամբ մը : Երկարօրէն
ժանրանալով Հ. Յ. Դաշնակցութեան
սասնամեայ գործունէութեան վրայ՝
ըսաւ թէ անիկա օրինակելի հարա-
տեւ և անվատ եղած է : Հրաւէր
կարդաց Սիւնիարէի երբեմնի կաղմա-
մակերպուած այլ այժմ լուծուած
Հնչակեան մասնաճիւղի անդամիե-
րուն , որ միանան Դաշնակցութեան
կօմիտէին : Մասնաւորապէս ասե-
նարանը չեչտեց կարեւորութիւնը
միահամուռ գործին , օրինակ բերե-

լով Դաշնակցութեան և Մակեդոնա-
կան գերագոյն կօմիտէին համերաշխ
գործունէութիւնը , բոլոր ծափահա-
րութիւն : Ապա երգեցիկ խումբը
խորխորէն երգեց «Կողմեցէք»՝ որ-
մէ յետոյ պատանի մը Պ. Բերրէ
Յարութիւնեան , սուր ու թրթուռ
ձայնով արտասանեց «Բողոք առ Եւ-
րոպան» , ցնցեց բոլոր հանդիսական-
ներուն ջիւղերը : Մեղրանոյ կերպով
երգուած «Մեր հայրենիք»էն ետքը ,
Սիւնիարէի Մակեդոնական կօմիտէի
կողմէ բեմ բարձրացաւ Պ. Հալուզով ,
Համակրելի պարոնը՝ որ շատ յուզ-
ուած էր , հայկական կոտորածներուն ,
հայ առապանքին եղբրական պատ-
մութիւնը պարզեց օտարազգի հան-
գեսականներուն , ձեռնհասօրէն խօ-
սեցաւ հայոց բարոյական ուժին
վրայ , գնահատեց հայ մատենագիր-
ներուն , արուեստագէտներուն , յե-
ղափոխականներուն կատարած գերը :
Պ. Հալուզով գրվեց Հ. Յ. Դաշնակ-
ցութեան ընթացքը , հրաւէր կար-
դաց բոլոր հանդիսականներուն որ
նիւթապէս ու բարոյապէս աջակցին
անոր : Ընտանաբար թեմանց տարափէ
մը բռնուած , յարգելի ատենախօսը
իջաւ բեմէն և գաշնակցականները
փութացին շնորհաւորել զայն : Այս
անգամ երգեցիկ խումբը հիւանալի
կերպով երգեց «Մասուն ելաւ»ը :
Ապա իզական վարժարանին սանու-
հիներէն մին , Օր. Թագուհի Սար-
գիսեան , յորդ , զայն ու տիրանոյ
ձայնով , արտասանեց Հայ-Գոտանի
Դաշնակցութեան տասնամակը՝ որ
խորապէս յուզեց բոլոր հանդիսա-
կանները :

Ի վերջոյ , Տեան երկարաչունջ և
կուռ ոճով ուսումնասիրութիւն մը
կարդաց՝ հանդիսականներուն լայն
ու ճշգրիտ գաղափար մը տալու հա-
մար քառորդ գարե ի վեր ծագած
հայկական հարցին և ասար տար-
ուան յեղափոխական շարժումներուն
վրայ : Պարոնը փաստերով յայտնեց
թէ հայ յեղափոխութիւնը անխու-
սափելի արդիւնք է թրքական դժո-

խայրն ուժիւնին , թէ յեղափոխական
տարրերը , մանաւանդ զաշնակցա-
կանները , գործելէ չեն զաղքած
բնաւ և պիտի անվատ մղեն կոնը
ընդդէմ հասարակաց թշնամին ,
Հ. Յ. Դաշնակցութեան և մակեդո-
նական գերագոյն կօմիտէին միա-
ցումը : Ըստ Տեանի պիտի իրեն
քաջ նաեւ միւս հայ յեղափոխական
ուժերն ալ : Ունկնդիրները ծափող-
ջուներէն այս խօսքերը , որոնցմէ
ետքը՝ մեծ յաջողութեամբ երգ մը
ալ երգուեցաւ :

Արժ. Տէր Տաճատ քահանայ Դեր-
ձակեանը պահպանելով մը փակեց
աւս համեստ ու օգեւորիչ հանդէսը ,
և ամէն ոք լաւ յուզումներու են-
թակայ մեկնեցաւ պարտկէն :
ԱԿՆՈՑ

ՌՈՒՍ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԲՐՈՑԷՍԵՕՐՆԵՐԸ

Ուսանողական խումբութիւննե-
րու միջոցին , ինչպէս գիտեն
մեր ընթերցողները ռուս մտաւո-
րական գասին ամենէն փայլուն
նեթկայացուցիչները աւելի ու-
սանողներուն պաշտպան հանգի-
սացան իսկ ռուս վարչութիւնը
մեղադրեցին :

Նոյն ատեն Մոսկուայի հա-
մալարանին բրօքէսէօրները
յուզեալ ուսանողութեան կոչ մը
ուղղեցին որով վերջիններս կը
հրաւիրէին հպատակիլ կառավա-
րութեան կարգադրութիւննե-
րուն , մի միայն իրենց գասերով
զբաղիլ ևւայն :

Այսօր ռուս ուսանողութիւնը
իրենց այդպիսի ոգիով կոչ մը
ուղղող ուսուցիչներուն հետեւ-
եալ կերպով պատասխանած է :

«Ուսանց կուրի յաղթուի
չիկայ : Ուսանողութիւնը ա-
հալը աչքի առչելու բերելով
չունի թէ քննութիւններէն ա-
բան մը իրեւան կուզայ :

Այդպէս ըլլալուն իբր փա-
կրնան ծառայել Մոսկուայի ի-
տենի դաշտին վրայ եղած դը-
բաղողութիւնը , Բեթթօրաւով
ամրոցին մէջ գանուած կիներ
բռնաբարելու դէպքերը ,
տեղի ունեցան 1899 թուականի
Մի համարձակիք ձեր բարեկ-
մական կոչով մեր պատուը
տոտել : Դուք մեր թշնամիներ
էք , ժողովուրդի և ազատութե-
թշնամիներն էք : Եւ մենք
նուն ճշմարտութեան , ժողովու-
րդին , գիտութեան և ազատ-
ութեան բոլոր դժգոհները , ճե-
ուածները և թշուառները կուռ-
լու կը հրաւիրենք : Ահա այս
ատեն պիտի տեսնենք թէ
պիտի յաղթե՞ն :

Ահա ինչ պատասխան կուտա-
ռուս ուսանողութիւնը իր ան-
ուսուցիչներուն , որոնք կառու-
րութեան զուռնան կը փչեն
ազուէսային դիրք մը բռնելու
դէպի ուսանողութիւնը կուռ-
լայն ազատական ձգտումներէ
ետ կասեցնել :

Մելիքովի մը , Թօլսթօյի մը
գիմաց՝ այդ թղուկ բրօքէսէօր-
ները աւելի կը պղտիկան
այնքան կատորնանան որ բռնու-
թեան պահպան հրեշտակներ
գերեր կատանձնեն :

Իրենց աշակերտներէն այդ-
պիսի բարոյական ապստակ
ընդունող բրօքէսէօրներն եթէ
քիչիկ մը բարոյական ունենա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳՈՐԾ ՀԱՆՃԱՐ

1890 թւականի սեպտեմբերի անձ-
րեւոտ առաւօտ էր Գալաթիայի աշ-
տարակին մօտիկ փողոցներէց մէկի
մէջ , մի բարձր տան փոքրիկ սեն-
եակում , նստել էր անմոռանալի
Գրիգոր Գրեհանը . նրա խոշոր աչ-
քերը մի տարօրինակ ուրախութեամբ
էին փայլում , նա օգեւորված խօսում
էր իրենից մի երեք չորս տարով մեծ
երիտասարդի հետ :

— Ձեռ գիտեր Սուրէն , ինչ հրա-
շալի գիւտ է այդ . հնարելը հայ եր-
կաթագործ մըն է , պարզ երիտա-
սարդ մը :

Ու անանկ յստակ կերպով մը կը
բացատրէ որ ամենէն պարզ մարդը
կրնայ հասկնալ թէ՛ անոր գիւտը
զառանցողի մը երազանքին ար-
դիւնքը չէ , այլ ծրագիր մը՝ որ ամե-
նայն դիւրութեամբ կրնայ իրակա-
նանալ :

Երեւակայէ ռուս մը որ անիչ-
խանականներու ռուսքէն չի նմանի-
այլ 50—100 հրացանի տեղ կրնար ծա-
ռայել : Անով հայ մը կրնայ 50—100
թիւրք զինուոր սպաննել . և որչափ

աժան պիտի ըլլայ , ատրճանակէ մը
աժան : Ձէ , ատիկայ Հայ Յեղափո-
խութեան համար գիւտ մըն է . նախ
անոր համար որ շատ զէնք գնելու
ստակ չունինք , երկրորդ որ շատ
անձնագրահներ չունինք :

Յետոյ , այդ ռուսը ուրիշ առաւե-
լութիւն մըն ալ ունի . ինչպէս ըսի
անիչխանականներու ռուսքին չի
նմանի . արդէն գիտես որ մեր մէջ
ալ վախցողներ շատ կան ռուսքի
գործածումէն , որով իբր թէ Եւրո-
պացիները զմեզ սոսկ անիչխանական-
ներու տեղ կրնան ընդունիլ : Ատ
ռուսը , ինչպէս ըսի , բազմաթիւ
հրացաններու գեր կրնայ կատարել .
երեւակայէ խոշոր մետաղէ գունդ մը ,
որուն մէջ բազմաթիւ հրացանի գըն-
դակներ կան :

— Ես օգեւորուեք ես , Գրիգոր .
այնքան օգեւորուեք ես որ եթէ քու
տեղը ուրիշ մը այդ ամէնը պատմէր ,
երազողի մը տեղ պիտի ընդունէի .
սակայն գիտեմ որ դու շատ զբաղան
մարդ ես , ատոր համար ալ կը հաւա-
տամ ըսածիդ : Է՛հ ո՞ւր է այդ Հայ
հանճարը . ճշմարիտ , ճիշդ ժամանա-
կին ծներ է : Մեզի պէս ժողովրդի
մը յեղափոխութեան միջոցին ասանկ
հանճարի մը պէտքը շատ զգալի է .
մեր թշնամիներ մեզմէ շատ զօրեղ է .
մենք զայն յաղթելու համար մեր
խելքին և կորովին վրայ պիտի յե-
նուենք :

— Իրօք հանճար մըն է մեզի համար
երկինքէն իջած , բայց ցաւ մը ունի .
անպատճառ կուզէ որ , նախ քան այդ
գործին ձեռնարկելը , X եպիսկոպոսը
զինքը օրհնէ :

— Ինչ կըսես Գրիգոր , ուրեմն
այդքան կրօնամոլ է իսկ եթէ եպիս-
կոպոսը չօրհնէ , չի պիտի չինէ :

— Կարծեմ որ չը պիտի չինէ , մի
քիչ տիրած պատասխանեց Գրիգորը :

— Բայց ինչպէս ընենք Գրիգոր ,
ուրեմն մեր ամենամեծ գաղտնիքը
այդ եպիսկոպոսին պիտի հաւատանք .
որչափ ալ ան աղէկ մարդ ըլլայ , այ-
նու ամենայնիւ մենք բարոյական
իրաւունքը չունինք յեղափոխական
մարմնոյ մը ամենէն մեծ գաղտնիքը
անոր յայտնել . այդ հանճարիդ աս
բանը չը կրցիր հասկնել :

— Այ , չը կրցի . Սուրէն , որչափ
ալ աշխատեցայ , տասը օր է որ կը հա-
մոզեմ այդ արտաւոյն ամբիւն ևս կե-
նայ , չեղաւ : Կուզէի համոզելէս վեր-
ջը քեզի յայտնել . բայց տեսնելով որ
անհնարին է , այսօր եկայ քեզի որ
ճար մը գտնաս . կուզէի միտսին եր-
թանք անոր քովը , դուցէ դուն հա-
մոզես :

— Իսկ եթէ ես ալ քեզի պէս ան-
յաջողութեան մատնուիմ , այն ժա-
մանակ ինչ պիտի ընենք :

— Պիտի աշխատես եպիսկոպոսի
հետ տեսնուիլ , անոր հասկնելու և

օրհնել տալ այն գրուելը , որուն մէջ
իրական հանճար մը կայ , բայց կայ և
մեծ , խոշոր նախապաշարում մը :

Սուրէնը և Գրիգորը տանից
դուրս եկան , իջան Գալաթիայի վարի
կողմերը , և ծովափին մօտիկ նեղ
փողոցներէց մէկում գտնվող մի յոյն
գարեջրատուն մտան :

Գարեջրատան մի անկիւնում , սե-
ղանի ծայրին , մի գաւաթ գարեջրու
առջեւը դրած և իր զօրեղ արմուն-
կի վրայ յենված նստել էր մի թխա-
ղէմ , կոլու երեսով , մեծ գլխով
լայն ճակատով , երազող աչքերով ե-
րիտասարդ , Գարեջրատան մէջ բաւա-
կան մարդիկ կային , բայց մեր նկա-
րագրած երիտասարդը իսկոյն աչքի էլ
ընկնում . նա իր գլխով , իր ամբողջ
գէմքով տարբերվում էր բոլոր ներկա
նողներէց . նրան տեսնողը անպատ-
ճառ կը պարտաւորուէր ուշի ուշով
գիտել նրա տարօրինակ մեծ գլուխը ,
լայն ճակատը և նրանց պարզը խո-
շոր սեւ ու անյատակ աչքերը : Այդ
աչքերը հանճարի աչքերն էին :
Գրիգոր նրան մօտեցաւ , Սուրէնն էլ
հետեւեց Գրիգորին :

Սովորական ողջոյնը փոխանակելուց
յետոյ , Սուրէնը նստելով երիտասար-
դի կողքին երկու գաւաթ էլ գարե-
ջրու պատու իրեց և ասաց :

այլ եւս համալսարաններու շէմքը
ոտք չի պիտի գնեն, որովհետեւ
տեւ հոն գտնուող ուսուցիչները
զիրենք արհամարեր են և պիտի
արհամարեն: Սակայն բռնակալ-
ներու առջեւ քծնուցներու քով
այդ քիչիկ մը բարոյականն ալ
չի գտնուիր:

Մոսկուայի բրոքէսէօրները ու-
սանողներու գրաւոր ապտակը
ուտելէն վերջն ալ իրենց դատա-
խօսութիւնները կը շարունա-
կեն:

ՆՈՐ ՓՈՐՑ ՄԸ

Այս քանի մը օրերս, ամբողջ
Եւրոպական մամուլը կրկին թուր-
քիայով կը բարձրի: Այս անգամ
թուրքիոյ մէջ բնակող թաւա-
ներու կոտորածը կամ հալածանքը
չէ զբաղեցնողը. այլ հոն գէշ-
նուած օտար փոստաներու դէմ
թուրքիոյ բռնած խիստ դիրքը:

Թուրքիա, մենաւանդ Սուլթան
Համիտ երկար ատենէ ի վեր կու-
զէ ջնջել թուրքիոյ մէջ գտնուած
Եւրոպական փոստաները. ատ
փոստաները Սուլթան Համիտի
աչքին փուշը դարձած են, որով-
հետեւ արտասահմանէն անոնց
միջոցաւ եկած նամակները և
հրատարակութիւնները Սուլթա-
նին ուտիկաններու, լրտեսներու
ձեռքէն կազատին:

Սուլթանին կառավարութիւնը
քանի մը անգամ փորձեր ըրաւ
այդ փոստաներէն կորզել արտա-
սահմանէն եկած նամակները.
բայց յաջողութիւն չունեցաւ,

վերջը որոշեց բոլոր փոստանե-
րուն մէջ լրտեսներ գնորդ ան-
նամակ ընդունողները բռնելու
համար, ատ ալ մեծ արդիւնք
մը չտուաւ, և հիմա Սուլթան
Համիտ այդ փոստաներու վերջ-
նական բարձու մը կը պահանջէ
Եւրոպական պետութիւններէն,
սուտ ու մուտ պատճառաբանու-
թիւններով: Այնքան ապուշ է
որ փոխանակ իր փորին ցաւը
ճշմարտութեամբ յայտնելու Ե-
ւրոպացի պաշտօնները մարտա-
նենգութեան մէջ կը մեղադրէ:

Ու Եւրոպայի դեսպանները կը
կատարին, նախ անոր համար որ
Սուլթանը այլևս Եւրոպան հիշ
բանի տեղ չի գնորդ և կուզէ փոս-
տաները ջնջել, երկրորդ որ Ե-
ւրոպայի պաշտօնական մարդոց
մաքանները տիտղոսը կուտայ:

Ճշմարիտ, Եւրոպան Սուլթա-
նին այնքան երես տուաւ, այնքան
չոյցեց, անոր աներեւակայի լի ոճ-
րագործութիւններուն հանդէպ
այնքան պաշարիւն հանդիսատես
մը եղաւ, որ կարմիր Սուլթանը
ալ չփացած լակոտ մը գարձաւ
և այսօր իր խնամակալները բա-
նի տեղ չի սեպեր:

Արդե՞օք այդ չփացած լակո-
կը այնքան առաջ պիտի երթայ
որ լաւ մը ծեծուի, թէ կրկին
պոշը քիչ մը տրորուելուն պէս
պիտի սկսի քծնել խնամակալնե-
րուն առջև մինչև աւելի բարե-
պատեհ առիթ մը երևան գայ և
նորէն փորձ մը ընէ:

Պօլսոյ դեսպանները շարունակ
խորհրդակցութեանց մէջ են,
Համիտի համար սանձ մը հնարե-
լու վրայ կը մտմտան. խնդիրը

իրենց շահուն կը վերաբերի,
ոչ քրիստոնեայ թայաներուն,
կարելի է որ ատ սանձը բաւական
ազդու ըլլայ:

Ադամեան ընտանիքը իր
խորին շնորհակալութիւնները կը
յայտնէ այն ազնիւ ազգայիննե-
րուն և բարեկամներուն որոնք
իրենց ողբացեալ եղբոր յուղար-
կաւորութեան հանդէսին ան-
ձամբ կամ գրութեամբ իրենց
ցաւակցութիւնը յայտնեցին:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Ապրիլ 30 ին Իսլիմիայի մէջ,
Հ. Յ. Դաշնակցութեան տասնամ-
եակին առթիւ, ի յիշատակ Հայ
Յեղափ. նահատակներու հոգե-
հանգստեան պաշտօն կատարուե-
ր է: Արարողութեան հաջորդ Պ. Պ.
Համամճեան և Գասպարեան օր-
ուան պատշաճօղ նիւթերու վրայ
ատենախօսութիւններ ըրեր են:

—Միլիպէէն կը գրեն մեզ,
«Իրաւունք» ի 32 թիւի մէջ «Դրօ-
շակեան» ստորագրութեամբ բերե-
ցած հայհոյալից քարտը ամբող-
ջովին կեղծիք էր և նմոյշ մը
այն կարգի ցածութեան՝ որուն
ընդունակ են Միլիպէի աղտոտնե-
րը: Մանրակրկիտ քննութեամբ
մը ստգուում է որ, ոչ մէկ
գաշնակցական ինքիքին այդ
տեսակ քայլ մը առնելու թոյլ
չէ տուած: Դաշնակցականները
ինքզինքնուն երբէք Դրօշակեան
անունը տալու սովորութիւն չու-

նին. այդ ալ ատոր կեղծիքին
ապացոյցներէն մէկն է:

—Հայրենիքէն կիմանանք
թէ Պօսթընի Հ. Յ. Դ. կօմիտէ-
ին նախաձեռնութեամբ ի նպաստ
«Իրօ Արմէնիա» զեղեցիկ հան-
դէս մը կազմակերպուած է, ուր-
կէ 54.25 սուլար զուտ հասոյթ մը
գոյացած և զրկուած է նոյն
թերթին խմբագրութեան:

—Պօլսոյ «Արեւելք» էն կը տե-
ղեկանանք որ, Պուլկարիոյ և
Ռումանիոյ առաջնորդութեան
համար կրօն. ժողովը մտադիր է
ուղարկել Յով. Եպս. Արշարունի
ժողովը նկատելով որ այս առաջ-
նորդութեան զեմը անկարող
է առանձին առաջնորդական
ծախքերը հայթայթելու, ընտ-
րական իրաւունքը Պօլսոյ Վզ.
վարչութեան կույտէ վերապա-
հել:

—Գլխի նորընտիր առաջնորդ
Եզնիկ Ծ. Վ. Գալիպօսեան ըն-
գունած ըլլալով այդ պաշտօնը
կը պատրաստուի միկնիլ իր պաշ-
տօնատեղին:

—Կաթողիկոսին հրամանով
կարգալոյծ եղած է Դավրէժի
Ղեկնիք քահանան իր ամբարիչ-
ընթացքին համար:

—Սիսի որբանոցին մէջ ար-
հեստանոց մը հաստատելու հա-
մար նպաստից յանձնաժողովը 50
ոսկի դրամագլուխ մը յատկաց-
ուեր է և 60 ոսկի ալ տարեկան
նպաստ Ս. Յովհաննու վանքին
մէջ պատասպարեալ որբերուն հա-
մար:

—Նիկոմիդիոյ ազգայիններէն
Յարութիւն ձէլլատեան Եէտի
Գուլէի հիւանդանոցին համար

—Շատ ուրախ եմ որ պատիւ
կուենանք ձեզի պէս հնարագէտ երի-
տասարգի մը հետ ծանօթանալ: Պ.
Գրիգորը ինձի ամեն բան պատմեց-
լը գրեթէ թէ ո՛րչափ մեծ ծառայու-
թիւն պիտի մատուցած ըլլաք մեր
զժբախտ ազգին, սակայն ինչու
անպատճառ հպիսկոպոսին օրհնու-
թիւնը կուզէք այդ օգտակար գործը
ընելու համար: Հանճարը մի քանի
վայրկեան յուս մնաց, և վերջապէս
կարծես ամաչելով իր կազմվածքին
չը յարմարողը թարակ և քնքոյշ
ձայնով պատասխանեց:

—Անանկ. այդ օրհնութիւնը ան-
հրաժեշտ է իմ խղճս հանդարտեցնե-
լու համար: Պ. Գրիգորը շատ աշխա-
տեցաւ զիս ետ կեցնել. բայց չեղաւ,
յուր ալ մի աչքատիք: Իմ վերջին
խօսքս է իմէ այն հպիսկոպոսը օրհնէ
զիս այդ գործը շինելու համար. և
ալ կը շինեմ:

—Իսկ եթէ չօրհնէ՞, մի քիչ խօ-
ժարված զեմքով ու չոր ձայնով
հարցրեց Սուրէնը:

—Ձեմ ընեք, կարուկ կերպով պա-
տասխանեց հանճարը:

—Շատ լաւ, պատախանեց Սու-
րէն. դուք օրինակ մը շինեցէք,
փորձը ընենք, եթէ յաջողիք այն
ժամանակ ես պիտի աշխատիմ որ
հպիսկոպոսը ձեզի օրհնէ: Այդ զիջ-
ուութիւնը ըրէք. հասկցէք որ առանց

համոզված ըլլալու թէ իսկապէս օգ-
տակար գիւտ մը ըրած էք, ծիծաղե-
լի պիտի ըլլայ անանկ յարգելի և
պիսկոպոս մը անհանգստացնել:

Սուրէնին այս խօսքերի վրա, Հան-
ճարը բուական երկար մտածեց,
ձեռքով ճակատը շփեց ու, վերջապէս
գրեթէ կիսախեղճ ձայնով պատաս-
խանեց:

—Շատ աղէկ, ևս օրինակ մը կը
չինեմ, միասին կերթանք փորձը
ընելու. ևս ձեր ազնուութեանը կը
հաւատամ, յուսով եմ որ եթէ հպիս-
կոպոսը զիս կօրհնէ, յուր իմ գիւ-
տիս հաղտնիքը ուրիշին չի պիտի
յայտնէք:

Գրանից յետոյ, խօսակցութիւնը
փոխվեց, մի քանի գաւաթ գարե-
ջուր էլ պահանջեցին երիտասարդ-
ները և մի փոքր ուրախանալուց
յետոյ, դուրս եկան գարեջրատնից,
ամէն մարդ իր տունը գնաց:

Տասնհինգ օրից յետոյ, Պօլսոյ
գործ. ըլուրների մէջ թափառում
էին երեք հայ երիտասարդներ, Ե-
րեքով մի հրացան և մի շուռն ու-
նէին: Հանճարը իր մահարեր գոր-
ծիքների օրինակը պատրաստել էր
և հիմա եկել էին փորձը կատարե-

լու. նա իր հետ ունէր ևս նափթի
երկու թիթեղատուփեր. այդ երկուսը
իրար մէջ հագցրեց. գնաց փոսի
եզերին կանգնեց, իր հնարած մետա-
ղի գունդը դրեց սուփերի մէջը և
նետեց անդունդի մէջ: Երջակաները
որոտացին, Սուրէն և Գրիգորը տեղ-
ներինցը վեր թռան, Երեքն էլ խոր-
խորտախ բերանից հեռացան. քայլերը
ուրիշ կողմը ուղղեցին կասկածից և
ուշադրութիւն հրա իրելուց ազատ
մնալու համար: Մի կէս ժամից յե-
տոյ՝ կրկին վերադարձան նոյն տեղը
խորխորտի մէջ. փնտնեցին թիթեղ-
եայ սուփերը, Նրանք թոնկ կորել
էին. ու գրեթէ քանի կտորի վերածե-
լուց յետոյ, իսկ մետաղէ գունդը
այնտեղ ընկած մնացել էր իր բազ-
մաթիւ բերանները բաց:

Փորձը կատարելու պէս յաջողված
էր:

Երեք հայ երիտասարդների ու-
րախութեանը չափ չըկար. կատար-
եալ հրճուանքի մէջ էին:

Գրիգորն ասում էր.

—Գիտես Սուրէն, եթէ հարիւր
հատ մը ունենանք ասոնցմէ և աղէկ
գործածենք, ահագին սարսափ պի-
տի ազդեցութեամբ բերուն վրա. ա-
նոնք աւելի պիտի սարսափին երբ
տեսնան թէ ամէնքն ալ զնսակահար
եղած են, բայց ոչ անիշխանականի
ոռւմբով սպաննուած:

ԱՐԳՕ

3000 զրշ. միայն յանձներ են առաջնորդին .

— Քանի մը գիտնականներ նպատակ ունենալով Լազարեան ձեմարանի նախկին տնօրէն հանգուցեալ Գ. Քանանեանի յիշատակին ժողովածու մը կազմել, կը խնդրեն անոր բարեկամներէն, աշակերտներէն, պաշտօնակիցներէն որպէսզի աշակցին իրենց, այդ նպատակին համապատասխանող նիւթեր զրկելով (ինչպէս յիշողութիւններ Քանանեանի մասին, անոր նամակները և այլն) : Հրատարակութեան արգելիք պիտի յատկացուի արեւելագիտութեան ամենալաւ գորուածքներու համար տրուելիք ոսկիէ մետաղներուն : Չեռագիրները պէտք է մինչև սեպ. 1 զրկել Լազարեան ձեմարանի հասցէին (Մոսկուա, Արմենասքի Բէրէուլք) :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա .

Թուրքիոյ ելեւմտական նախարար Ռէշատ փաշա պաշտօնանկ ըլլալով անգամ ընտրուած է պետական խորհրդոյ և իրեն պաշտօնը յանձնուած է կրթական նախարար Զիւհաի փաշայի որ առժամանակեայ կերպով երկու նախարարութիւնը մէկանց պիտի վարէ : Կերելի թէ Սուլթանը նախարար փոխելով կը յուսայ հրաշքի մը երեւումին՝ որպէսզի պետական գանձը ոսկիով լեցուի : Նաեւ ոստիկանական նախարար Եէֆիզ պէյը փաշայութեան բարձրացեր է ի վարձատրութիւն իր «սինիք»ութեան :

— Պօլսէն Տէյլի Մէյլի կը գրեն թէ Սուլթանին առողջական վիճակը վտանգաւոր է :

Սուլթանը ոչ միայն անբուժելի հիւանդութեան մը ենթարկուած է այլ նաեւ ուղեղային խանգարումի մը նշանները ցոյց կուտայ ժամանակէ մը ի վեր և զեւսպանները լուրջ նկատողութեան առած են այս պարագան թէեւ գաղտնի կը պահեն և պաշտօնապէս հերքելու տրամադիր են :

Հիւս կըսեն կառավարութեան զեկը կը գտնուի ամբողջովին Իզզէթ պէյի ձեռքը :

— Պօլսոյ մէջ օտար նամակատուներու խնդիրն հետզհետէ սուր և միանգամայն ծիծաղելի հանգամանք մը կըստանայ : Գեսպանները գաղտնի խորհրդակցութիւններ ունեցած են որոնք ծածուկ կը պահուին և Սուլթանը մտահոգութեան մէջ կը ձգեն : Բոլոր գեսպաններն ալ համամիտ են ձեռք առնուելիք միջոցներուն վրայ որոնց մին է շքեղութիւնը արտաքին գործոց նախարարութեան պայուսակը, այնպէս որ Թուրքիա չի պիտի կրնայ

նամակով հաղորդակցել իր գեսպաններուն և գործակալներուն հետ :

Պուլկարիոյ սահմանագլուխին վրայ թղթատարութեան Գերման պաշտօնեայն մերժած է յանձնել Եւրոպական ծրարները թուրք պաշտօնէին :

Իււրը այս ամենէն յետոյ միշտ առարկութիւններ կը ներկայանցէ և կը պահանջէ որ փակուին օտար նամակատուները : Օրինակ ցոյց կուտայ ճաբոնը և Եգիպտոսը և կաւելցնէ թէ ոչ մէկ հիման վրայ օտար կառավարութիւնները իրաւունք ունին նամակատուներ պահելու Թուրքիոյ մէջ երբ Օսմ. թղթատարութիւնը իր կատարելութեան (.) հասած է : Գեսպանները անմիջապէս ետ են դարձուցեր դրան այդ նոթան և կը պահանջեն որ Թուրքիոն համար նուիրական պարտականութիւն մը ըլլայ յարգել Եւրոպական փոստին ի թիւրքիա անկախ մուտքը և միանգամայն ներդրութիւն խնդրուի : Գաղտնիքները և իրենց բռնաբարութիւններուն համար :

Մինչև որ այս գոհացումները տրուին, Եւրոպական սուրհանգակը կը մեկնի, մինչև Թուրքիոյ սահմանագլուխը, Փրանսոյի պաշտօնէի մը ընկերակցութեամբ և միևնոյն կերպով կը բերուի : Ռուսական թերթերը Սուլթանին հետ պաշտօնեաներուն այսքան ընդդիմութիւնը կը վերագրեն Գերմանական ազդեցութեան և կըսեն «այն ուշագրութիւնը որուն առարկայ եղած է Սուլթանը, Պէրլինէն Պօլիս շարունակ քաջուած քաղաքական հեռագիրները, Սուլթան Սալէտտինի գերեզմանին խրկուած պսակները և Պօլսոյ հաւատացեալները զովացնելու համար հիմնուած ազդեցը, ասոնց ամենքը իրենց արգելիք ունեցան, սակայն Գերմանիոյ չը յուսացած արգելիքը որով Սուլթանը երես ելաւ, և այսքան առաջ կերթայ ու այսօր այնպէս մը կը վարուի օտար կառավարութիւններուն հետ ինչպէս երբէք վարուած չէր» :

Թուրք կառավարութիւնը շքեղաբերական մը խրկելով օտար նամակատուներու տնօրէններուն կըսէ թէ՛ որովհետեւ կը մերժեն Օսմ. կառավարութեան միջոցաւ նամակները ցրուել և կամ անոր քննութեան ենթարկել Եւրոպական փոստան, կարգիլէ Թուրքիայէն մէկնել ամեն արժէքաւոր նիւթեր ընդ որս և դրամ :

— Տարտանէլի մէջ թուրք կառավարութեանը ձեռքակալեր է Բէօսէ Հօճա անուն թղթավաճառ տաճիկ մը, որ սպայի մը հետ նոյն քաղաքի զինուորական զօրութեան և ամրութեանց գաղտնիքը Անգլիոյ կառավարութեան

ծախած է եղեր : Չերբակայուածը Պօլիս բանտարկուած է :

Նոյն քաղաքէն կիմացեն թէ ժամանակէ մը ի վեր շարունակ փամփուշտի և հրացանի արկղներ կը հասնին որոնք գիշեր ատեն շրջակայ գիւղերը կը փոխադրուին :

— Ապրիլ 30ին Եւրոպական մեծ պետութեանց զեւսպանները Թարապիոյ մէջ Պարոն Մարշալին գերմանական զեւսպանտունը ժողով ունեցեր են ժողովի նիւթը եղած է Բ. Իւնէն գոհացում պահանջել օտար փոստային պայուսակներուն վրայ բռնութիւն գործադրուելուն համար :

Իէ Եւրոպիա և Ռուսիա, որոնց փոստային պայուսակները չեն բացուած, այդ ժողովին մասնակցած չեն, բայց միւս պետութիւններուն հետ համաձայն են վճարականապէս գործել ձեռք բերուած արտօնութիւնները պաշտպանելու և օտար փոստայի գոյութիւնը պահպանելու համար :

Չորս պետութիւնները, որոնք ուղղակի ֆուստեր են թուրք կառավարութեան բռնած ընթացքէն, իրենց զեւսպաններուն ազդու հրահանգներ տուած են :

— Չորս պետութեանց զեւսպաններու խորհրդակցութիւնը փոստայի խնդրի մասին շարունակուեր է հետեւեալ օրը : Որոշումները գաղտնի կը պահուին, որը և կապացուցանէ թէ գոհացում ստանալու համար ազդու միջոցներ որոշուած են :

Բ. Իւնէն, որուն հետ զեւսպանները հիմակ հաղորդակցութիւն չունին, և որ զեւսպաններու մտադրութիւններէ տեղեկութիւն չունի, պիտի իմանայ այն ժամանակ երբ ընդունուած որոշումները գործադրուի սկսին :

Բ. Իւնէն հիմա կաշխատի իր զեւսպաններուն միջոցաւ, մանաւանդ Պերլինի մէջ, միջամտութեամբ մը պետութեանց համաձայնութիւնը խախտել, բայց այն լուրը թէ մեծ պետութիւններէն մին իր բռնած գիրքով Թուրքիան կը քաջալերէ, շքեղութեամբ :

Ընդհանուրի կարծիքը այն է որ խնդիրը միայն մէկ լուծում պիտի ունենայ, այսինքն Թուրքիա պիտի գաղթի օտար փոստաներու գէմ կռիւ մղելէ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա .

Պատերազմական նախարարը բանակի մէջ զետեղուած խումբ մը ուսանողներու յորդորած է հպատակիլ զինուորական կարգապահութեան, և անոնց թոյլատրած՝ իրենց անկողինները և առանձին սենեակները ունենալու իրենց զբոսորդութիւնը տալ թէ իրենց հետ գէջ վարուին, եւ թէ ուսանողները լաւ վարք

ունենան . Սեպտեմբեր ամսէ պիտի ազատ արձակուին :

— Միւս կողմէն ալ կը հաստատեն որ նոր կրթական նախարարը Չարին առաջարկած է 1888 կարգադրութիւնները շնչել որոնց համաձայն ուսանողներու ստիկանութեան հսկողութեան կենթարկուին : Այդ կարգադրութիւններու գոյութեանը վերագրեն այս վերջին տարիներու ուսանողական խռովութիւնները :

Այս պատճառով կրթական նախարարի և Բօքէտօնօսցէլի միջը ընդհարում տեղի ունեցեր է ձարին միջամտութեան պատճառով :

Մօսկուա կամ կրթական նախարարի կամ Բօքէտօնօսցէլին հրովարտուած կըսպասուի :

Թ Ր Ա Ն Ս Ա Ա Ա .

Բէթթաունէն Լօնտօն կը հեռագրեն որ Թրանսվալի հիւսիսային արեւելեան կողմը ճակատամարտներ կատարուեր են :

Պօլսէնը մեծ կորուստներ ունին . մինչև Ապրիլ 25 անոնց մէ 40 հոգի մեռեր, 200 վիրաւորուեր և 160 հոգի ալ անձնատուր եղեր են :

— Պօլսոյ ու Վիլնիսի Պօլսոյ զօրախումբերը միացեր և Քարոլինան գրաւեր են :

— Տըլուրի զօրավարը Պէպիկի թըն զօրավարին հետքը գտեր և կը կարծուի թէ կը գործէ նախարարաւ :

— Թայմիլի Քիէնարի վէճէն ապրիլ 30ին կը հեռագրեն թէ «Պաշ» կոչուած տեղը 1500 շապոօլներ ունենաւոր եղած են անգլիացիներուն :

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն .

Բէթինի օտար զեւսպանները որոշեր են ծանուցադրով միջոցառանքի զեկուցանել պատերազմական տուգանքի գումարը որ է 450 միլ. թաէլ : Այդ ծանուցադիր կը պահանջէ նաեւ պատասխան մը թէ Զինաստան ինչ ձեւով պիտի կատարէ այդ վճարումը :

ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽԱՏՐՈՆ ՊՕՐԻՍ

Հաճի Բաւաթօ

«Վառիթի» խմբին կողմանէ այս գիշեր պիտի ներկայացուի առաջին անգամ ըլլալով «Էրմանի» խիստ բարոյալից բանաստեղծ 5 արար :

«Կեսարիոյ ճամբորդները» խիստ ծիծաղաշարժ գաւեշտ 3 արար :

Վաղը կիրակի գիշեր պիտի ներկայացուի «Սպանիոյ մուրացիներ» բանաստեղծ 5 արար :

«Քանգէլի» Վէլի պապա խիստ ծիծաղաշարժ գաւեշտ 3 արար :

Հովիւ եւ հովուհի պարերգ Օր Մարիքայի եւ Պ. Գ. Յակոբեանի կողմանէ :

Ամէն յեղուէ քանթօներ Մատաւ Լուծիգայի եւ Օր. Զօիցայի կողմէ :

Կանխաւ պատրաստուած ամբողջ խումբին կողմանէ պիտի երգուի Հայրենիքի Զատիկը Հօյնէն լեզուա :

Отговорникъ:
Д-ръ МХГХРДИЧЪ ВАРГАНЪ
Печ. «Взаимность» — Варна.